# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան

16.12.2020թ.
ժամը 11:00

**Հանձնաժողովի նախագահ՝** Լանա Դավթյան
**Անդամներ՝** Դոնարա Լալազարյան
Մարիաննա Առաքելյան
Անուշ Մարտիրոսյանի
Լուսինե Նիկողոսյան
**Գնումները համակարգող՝** Արսեն Հովհաննիսյան

**<u>ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**

(Լ. Դավթյան)

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**<u>1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.</u>**

(Լ. Դավթյան)

1.1 Քանի որ ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով գնանշման հրացման ընթացակարգը հրապարակվել էր "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետով որոշում էր կայացրել ընտրված մասնակցին որոշելու նպատակով կասեցնել հանձնաժողովի նիստը և բավարար գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել էր նիստ, սույն թվականի դեկտեմբերի 16-ին ժամը 11:00-ին ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում: Բանակցությունների վարման համար սահմանել էր ժամանակ 20 րոպե:

1.2 «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ին էլեկտրոնային ձևով ծանուցվել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

1.3 Սահմանված ժամկետում և կարգով «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**<u>2. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկված գները.</u>**

(Լ. Դավթյան)

2.1<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հա փա բա ժին | Գնման ենթական ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը ՀՀ դրամով | Մասնակիցների անունները | Գնային առաջարկ ՀՀ դրամով | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար/ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Հաց | 9900000 | «Սևանի հացի գործարան» ՓԲԸ | 8250000 | 1650000 | 9900000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Լ. Դավթյան)

3.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից հայտարարել՝**
**«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ին**
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Դավթյան

Անդամներ՝ Դ. Լալազարյան

Մ. Առաքելյան

Ա. Մարտիրոսյան

Լ. Նիկողոսյան

Գնումների համակարգող՝ Ա. Հովհաննիսյան